**Արձանագրություն N 2**
**ՋԿ-ԳՀԾՁԲ-22/13-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 19 սեպտեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մելիքսեթյանը, Ն. Ավետյանը և Ս. Ալեքսանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Հայտերի բացման վերաբերյալ**

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/13-Տ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի սեպտեմբերի 09-ին, ժամը 16:00-ին:

**ՋԿ-ԳՀԾՁԲ-22/13-Տ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)**

| Մասնակցի անվանումը | հասցե, հեռախոսահամար | էլեկտրոնային հասցե |
|---|---|---|
| «Բագարանի Բարիք» ՓԲԸ | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան, Գ. Մարզպետունու փ. 4-դ փակուղի 3 հեռ. 093 713204 | dreamhouse.gnumner@mail.ru |

**Մասնակցի (ների) գնային առաջարկը**

ՀՀ դրամ

| | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| **Չափաբաժին 1**<br>**նախահաշվային արժեք – 891 800 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)**<br>ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություններ– «Երեւան» ջրօգտագործողների ընկերության կողմից սպասարկվող Մասիսի տարածաշրջանի Դաշտավան, Նորամարգ, Դարբնիկ, Մասիս, Զորակ համայնքների ինքնաշատրվանող խորքային հորերի բաժանարար կետերի կահավորումը փականներով և ջրաչափերով աշխատանքներ | | | | |
| | «Բագարանի Բարիք» ՓԲԸ | 850<br>ութ հարյուր հիսուն | - | 850<br>ութ հարյուր հիսուն |
| **Չափաբաժին 2**<br>**նախահաշվային արժեք – 1 271 970 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)**<br>ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություններ– ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի մայր ջրանցքի Հարթաշենի դյուկերի վթարված հատվածի կառուցման աշխատանքներ | | | | |
| | «Բագարանի Բարիք» ՓԲԸ | 1 250 000<br>մեկ միլիոն երկու | - | 1 250 000<br>մեկ միլիոն երկու |

**Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին**

---

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/13-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից **«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» չափանիշով պահանջվող նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի ֆայլը համակարգում ցույց է տալիս 0 մեգաբայթ ինչը հավասարազոր է այն չներկայացնելուն և գնային առաջարկի ծածկագիրը սխալ է լրացված (լրացված է ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագիրը սակայն պետք է լրացվեր ՋԿ-ԳՀԾՁԲ-22/13-Տ ծածկագիրը):

**Հանձնաժողովի որոշումը**

---

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/13-Տ ծածկագրով 1-ին և 2-րդ չափաբաժինների ընթացակարգի մասնակից **«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

Համաձայն ՀՀ կառ. 04.05.2017թ. N 526-Ն որոշման կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետը և հրավերի 8-րդ կետի 8.2 ենթակետը, գնահատող հանձնաժողովը որոշեց (գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան) մերժել **«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված 1-ին և 2-րդ չափաբաժինների հայտերը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման (ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պահանջներին) վրա ***ՋԿ-ԳՀԾՁԲ-22/13-Տ*** ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հրապարակել հայտարարություն ***ՋԿ-ԳՀԾՁԲ-22/13-Տ*** ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:***

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Անդամներ ------------------------------------ Գ. Մելիքսեթյան

------------------------------------ Ն. Ավետյան

____________________________ Ս. Ալեքսանյան

Քարտուղար ------------------------------------ Ա. Սարգսյան